

**Ազգային հիմնադրամի և նոր ռազմավարության պահանջ կա**

**Մարգարյան Սուրեն Թ.**

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*  
sargsyansuren@yandex.ru

**EDN: JCWAIA**

Եվ այսպես Արցախի հայությունն ամբողջովին հայրենագրվեց: Ավելի քան երեք տարվա ներքաղաքական աղմուկի ու պարտության թմբիրով տարված հայությունը թե՛ հայրենիքում թե՛ արտասահմանում նոր-նոր վերագործնելու և կյանքի նշույլներ է ցույց տալիս: Գործիսից մինչև Նոյեմբերյան կամավորական խմբեր են գործում, փորձում օգնել անօթևան ու քաղցած արցախահայությանը: Այդ գործընթացն իհարկե գնահատելի ու գովելի է, սակայն միաժամանակ ցույց է տալիս, որ Հայաստանի իշխանությունները, չնայած բարձրացրած աղմուկին ու մեծամեծ խոստումներին, գաղթականությանը պատշաճ ընդունելու կարևոր գործին բոլորովին էլ պատրաստ չէին: Ավելին, պաշտոնապես տեղեկացվում է, որ արդեն մի քանի հազար արցախցիներ լքել են Հայաստանը: Իսկ դա խոսում է այն տխուր իրողության մասին, որ ո՛չ իշխանությունները, ո՛չ ընդդիմությունը, ո՛չ էլ Հայաստանում «փափուկ ուժի համար արտաքին օգնություն օգտագործող մեր բարեկամ օտար երկիրները» որևէ լուրջ ծրագիր չունեն: Ասել է թե Արցախի տարածքային աղետն ու հայաթափումը մեծ կորուստներ էին, այո՛, բայց արցախահայությունը Հայաստանի մեջ մշտապես չվերաբնակեցնելը ցեղասպանական ընթացքի վերջնական ողբերգությունը պիտի լինի: Եվ եթե մեր բոլոր կարողությունները միասին գործի դնելով հանուն արցախահայությանը Հայաստանում վերաբնակեցման անմիջապես համահայկական համադրված գործունեություն չկազմակերպվի, ապա մեծ երագի՝ հայահամախմբման պատմական անչափ կարևոր մի առիթ ևս կկորսվի: Այս մարտահրավերը չի կարելի «խղճուկ և իրարից անջատ անհատական միջոցառումներով հաղթահարել»: Այստեղ խելացի ծրագրելու և համադրման խիստ անհրաժեշտություն կա, ամբողջականորեն արդիական միջոցներով, մարդուժով և այլ անհրաժեշտ պաշարներով ապահովված ազգային մի նոր հաստատության անմիջական կարիք կա:

Միաժամանակ կարևոր է, որ այս գործը որևէ ձևով չքաղաքականացվի և վերջին տարիներին իշխանությունների գործունեության անբաժան բաղադրիչ դարձած անպտուղ բանակովի չվերածվի: Բոլորի համար պետք է հստակ լինի, որ բռնի տեղահանված արցախցիներն, առանց որևէ բացառության, հավասարապես արժանի են պատշաճ օժանդակության և նրանց մեջ «ընտրյալներ» պետք չէ փնտրել: Որպեսզի այս գործընթացը հաջող ելք ունենա, պետք է նաև համակարգված ու ծրագրված բնույթ կրի: Եվ քանի որ այժմ այդ կարևոր գործընթացը կազմակերպող ու համակարգող համապատասխան պետական լուրջ կառույց գոյություն չունի, ապա այս հարցերը լուծելու համար կարելի է արդեն իսկ քննություն բռնած և իր արդյունավետությունն ապացուցած մասնավոր-պետություն գործընկերության օրինակն օգտագործել: Խիստ անհրաժեշտ է նաև, որ արցախահայության վերաբնակեցման գործն անպայման պետական մտածողությամբ արվի: Հասկանալ, որ ինչպես ժամանակակից պատերազմներում ֆիդայական ջոկատներով հնարավոր չի հաղթել, այնպես էլ բռնի տեղահանված գաղթականական հոսքերի բարդույթները ժամանակավոր մարդասիրական օժանդակությանը չի կարելի վստահիլ: Հարկավոր է զգուշանալ այն անչափ վտանգավոր թեզից ըստ որի Արցախի հիմնահարցը վերջնականորեն կփակվի արցախցիների Հայաստանից արտագաղթով: Անհրաժեշտ է հստակ ըմբռնել, որ ազգային պետության էական բաղադրիչը միայն հողը չէ, այլ նաև իր մարդկային դրամագույլը: Հողը կորցրեցինք, գոնե ժողովուրդին պահենք: Այս առիթը պետական լուրջ մտածողության մարտահրավեր է և իշխանություն-ընդդիմություն անպտուղ զգվածոցներով չի կարելի մսխել ու անփութորեն քամուն տալ:

Այսօր՝ չնայած այս ամենին, մեր ժողովուրդը շարունակում է ապրել նոր իրականությունում և փորձում է հարմարվել դրան: Մակայն նույնիսկ այս վերահաս սպառնալիքի ֆոնին մեր դեկավարությունը անփութորեն ոչ ճիշտ քայլեր է կատարում, որոնք նոր խնդիրների են հանգեցնում: Հավանաբար ամբողջ խորությամբ չընկալելով ստեղծված պետականությունը կորցնելու սպառնալից իրավիճակի լրջությունը կամ կանխամտածված, կրկին փորձում է «խաղաղության խաչմերուկ» և նմանատեսակ այլ ժամանակավրեպ խոսույթներով շեղել հասարակության ուշադրությունը լրջագույն հիմնախնդիրներից: Չըմբռնելով արսիոմատիկ այն ճշմարտությունը, որ որևէ պետություն առանց ազգային, հայրենասիրական շաղախի գաղափարախոսական հենքի, չի կարող գոյություն ունենալ և լինել հենց այնպես պետություն:

Ավելին, վերջապես նախկինում թույլ տված սխալները խոստովանելու և դրանք շտկելու ժամանակն է: Հատկապես ընդունելու, որ երբ Արցախը մերն էր, բոլորս հանգիստ ապրում էինք՝

անկախ մեր պետության ներքին խնդիրներից, որոնք բոլոր երկրներն էլ ունենում են և երբեմն դրանք հարթվում են, կամ՝ ոչ: Այնինչ, Արցախի չլինելիությունը մեզ հավերժական անհանգիստ վիճակ է սովել. ինձ չի թվում, որ այսօր Հայաստանում մարդ չկա, որ հանգիստ ապրում է, քանզի ոչ ոք չգիտի, թե հաջորդիվ ինչ է լինելու: Ոչ մեկի համար գաղտնիք չի այլևս, որ Արցախն այն դարպասն է, որ բացվեց ու ներս հորդեցին մեր բոլոր անհանգստությունները... Եվ այժմ արդեն մեր ազգային նպատակը պետք է լինի հայրենիքում մեր իրավունքների և անվտանգության ապահովումը, որոնք, ցավոք, հիմա ոչ մեկն էլ չունենք: Մնացել է հայրենիքի մի փոքր հատվածը, որը որոշ ժամանակ հետո չի էլ բավարարելու: Բայց համազգային կոնստուկտի պայմաններում երազանքի և նպատակի ձևավորումը կրերի դրա իրականացմանը: Մենք պիտի հասկանանք վերջապես, որ ժամանակներ և իրավիճակ է փոխվել, որ ԱՄՆ-ն նախկին Սովետ Միությունը չի, որ որբեր պահի: Ուրեմն ո՞ւմ վրա հույս դնենք, եթե ոչ մեզ վրա: Հերիք եղավ ուզվորի, մուրացկանի, որբի պես դռնեղուռ ընկնենք, օգնություն աղերսենք: Ի վերջո պետություն ենք, բանակ ու ինքնասիրություն ունենք և մենք պետք է մեզ ու մեր երկիրը պահենք: Իսկ դրա համար կարծում եմ, որ քանի դեռ մեր ներսում համերաշխություն, միասնություն չենք հաստատել, արտաքին ճակատում հաջողություն չենք ունենա, ինչպես որ չունենք: Դրանից էլ օգտվում է թշնամին և նորանոր սպառնալիքներ ստեղծում: Դարերով այսպես է եղել՝ շարունակ կորցրել ու կորցնում ենք ու այդպես չգիտեմ ինչքան ու չգիտեմ մինչև ուր: Չէ որ էլ կորցնելու բան էլ չի մնացել: Մտավախություն ունեմ, որ մեր ժողովուրդը թմբիկի մեջ է և իր անխելք ու անհեռատես քաղաքական կոչված մտավորական դեմքերով երկիրը տանում է հերթական աղետի: Հարկավոր է խելքի գալ, դադարել իրար ուտել, թե չէ...:

Գուցե իսկապես իրավացի էր Վանո Միրադեղյանը, որ գրում էր, թե թող երկրի ղեկավարը մթան մեջ աստիճաններից պատահաբար, այո, պատահաբար ընկնի-մեռնի: Ինչպես առաջին հանրապետության առաջին ղեկավար Արամ Մանուկյանը տիֆլից, պատահաբար, մեռավ, մեր երկրի համար ամենաճակատագրական պահին: Եթե երկրում սով, գաղթականություն ու տիֆ է, թող տիֆից ազգի ղեկավարը մեռնի: Եթե երկրում մուր է ու պատերազմ, թող երկրի ղեկավարն էլ լույս չունենա, որ քարտեզ չնայի, որ գերագույն հրամանատարը գլխավոր շտաբի հետ հեռախոսային կապ ունենա հովհարային անջատումների արանքներում: Որ ցրտից անքուն մնա, անվա պառլամենտ գնա ու դիվանագետներ ընդունի՝ անթրաշ: Հենց այդպես: Եթե դեմոկրատիա է, ինչ ղեկավար: Հենց այդպես, որովհետև «մեր ղեկավարը պիտի հայ չլինի, այլ քրդի բեկ և թուրք փաշա: Նաև ռուս չինովնիկ: Եթե հայ է, ինչ ղեկավար: Մենք հասարակ թուրք, հասարակ ռուս, հասարակ պարսիկ ազգ չենք, այլ բացառիկ, իսկ երկրով՝ ծովից ծով, իսկ ճակատագրով՝ սրի քաշված»:

Այսօր բոլորին մտատանջում է մեկ հարց՝ ո՞րն է այն վճռորոշ գործոնը, որ այս պահին կկարողանա կասեցնել մեր գահավեժը և մեզ կրկին վերադարձնել նորմալ ընթացքի մեջ: Ակնհայտ է, որ աշխարհաքաղաքական արցանը, որի մեջ հայտնվել է հայոց պետականությունն այսօր, աննախընթաց դաժան է: Այն պահանջում է նոր գաղափարներ, նոր գեներեր և նոր ռազմավարություն, քանզի այս կովի ռազմաճակատը ձգվում է Մյունխից մինչև Մոսկվա և մինչև աշխարհի հեռավոր անկյունները:

Մեր «ռազմավարական դաշնակիցը», որպես այդպիսին, անգոյ է շրջանի ռազմաբեմից, աշխարհաքաղաքական խաղաքարտերն ու Կովկասի ուժային քարտեզը մեր տարածաշրջանում փոխված են: 2022 թ. փետրվարի 24-ի Պուտին-Ալիևի ստորագրած 43 կետերից բաղկացած համաձայնագրով ոչ միայն Արցախն այլևս Ադրբեջանի անբաժան մաս է ճանաչվել, այլև Հայոց պետականությունը դարձել երկրորդական ֆիկցիա: Իհարկե, սա չի նշանակում, թե Ռուսաստանը հրաժարվում է Կովկասում իր ներկայությունից, ուղղակի նա այսուհետ հենվում է արդեն Ադրբեջանի վրա: Հետևաբար, հայկական կողմը նրա համար այլևս կորցնում է տարածաշրջանային գործոնի կարգավիճակը և Մոսկվայի համար Հայաստանն ու Արցախը դառնում են սոսկ «առուծախի» խաղաքարտ: Իսկ այս պարագայում հայոց պետականությունը հայտնվել է կազմաքանդման սուր մարտահրավերների առաջ: Ընդ որում դրսի և ներսի սպառնալիքները գործում են համատեղ: Իսկ հակառակ պատմական ջերմ և բազմաշերտ հարաբերություններին, Արևմուտքի շահերը Հայաստանի նկատմամբ միշտ էլ տարածաշրջանային հակասական շահերով պայմանավորված՝ պառակտում են: Անկախ այն հանգամանքից, թե Արևմուտքի ղեկավարներն ինչ հավաստիքներ կտան, նրանք ի սկզբանե Հայաստանի հետ հարաբերություններում տարատեսակ գործոններով ու շահերով կաշկանդված են: Այս ամենից հետևում է, որ մենք՝ ինքներս շատ գործ ունենք անելու, որպեսզի կարողանանք տարածաշրջանի խաղաքարտերը կրկին ի նպաստ մեզ վերադասավորել: Ծակատագրի բնական ընթացքով մենք այլևս տեղ չունենք տարածաշրջանում: Մեր տեղը մենք ինքներս պիտի պահպանենք մեր իսկ խելքով և մագիլներով:

Պետք է սկսել նրանից, որ մեր պատմական հայրենիքը չի կարող մեզ պատկանել, եթե մենք այն ամեն օր և ամեն գնով մերը չդարձնենք: Իմանալ հայրենի պատմությունը և տեր լինել մեր պատմական հիշողությանը, թեև մեր իրավագիտակցության կարևոր ու կենսական մասն են, բայց

դեռ շատ հեռու են մեր հիմնահարցերը լուծելուց: Ընթացիկ է պետք, որ աշխարհակարգը չոր և անողորմ հարաբերությունների խաղաղաշտ է, ուր գործում են կայսերական շահերը և այս ոլորտում ժողովրդավարություններ չկան: Իսկ բարի դրացիությունը մակերեսային խոսույթներ են, որոնք վարագուրում են միջպետական հարաբերությունների իրական գործոնները: Ժողովուրդների միջև մշակութային կապերն էլ զարգանում են, երբ դրանք՝ որպես ինքնիշխան պետականություններ, արդեն ապահովված են իրենց տեղը աշխարհակարգի տրամաբանության մեջ: Ամեն մի աշխարհաքաղաքական տարածաշրջան ինքնիշխան և միաժամանակ միմյանցից կախյալ պետությունների մի համակարգ է, բազմաթիվ օղակներով մի շղթա և երբեք պետք չէ մոռնալ շղթայական համակարգերը դեկավարող հայտնի օրենքը՝ որևէ շղթայի ամրությունն ու դիմացկունությունը հավասար է իր ամենից թույլ օղակի տարողության: Նույն օրենքը գործում է նաև տարածաշրջանների ներքին դինամիկայի գործընթացների մեջ: Աշխարհաքաղաքական շղթան չի հանդուրժի թույլ օղակները, քանզի տարածաշրջանային հավասարակշռությունը հաստատվում է աշխարհաքաղաքական «շղթայի» ամենաթույլ օղակների հաշվին: Եղթան լուծարում է թույլ օղակները շղթայի լինելիությունը ապահովելով:

Ինքնին հարց է առաջանում. արդյո՞ք անհույս է հայ անկախ պետականության գոյությունը Հարավային Կովկասի ռազմաբեմի վրա: Այն իրողությունը, որ այժմ մենք գտնվում ենք ակնապատված կացության մեջ, դեռևս չի նշանակում, որ փակուղային է մեր վիճակը: Քանի որ որպես կանոն՝ իրավիճակը փակուղային է լինում, երբ ինքներս ենք մեզ դնում փակուղու մեջ...: Այսպես, 44-օրյա պատերազմի նպատակը հայկական կողմի ռազմական պարտությունը չէր միայն: Այն հոգեբանական պատերազմի մասնագետների կողմից ավելի շատ միտված էր մեր ժողովուրդի և, հատկապես նրա վերնախավի քաղաքական գիտակցությունն անգործության մատնելու, իսկ նպատակը՝ ազգը բարոյապես և հոգեբանորեն աղամալուծելու: Այլ կերպ ասած՝ մեզ տրամադրելու, որ ստեղծված նոր աշխարհակարգի կառույցում հայ անկախ պետականության համար տեղ չկա: Բարեբախտաբար դա իրականությանն այնքան էլ չի համապատասխանում: Արդ, մեր խնդիրն է նոր և ազդու զինապաշարով մտնել այդ նորաստեղծ բարդ շրջապատույթի մեջ և կարողանալ ճիշտ կողմնորոշվել: Սակայն ցավոք մեր կարևորագույն լծակներին տիրապետում են ոչ լավագույն ուժերը: Պետք է գիտակցենք, որ տարածաշրջանի ճակատագիրը որոշողը միջկայսերական ուժերի համակարգն է և կարողանանք մեզ ձեռնառու կերպով տեղավորվել այդ հարթակում: Այսինքն՝ հայ ժողովուրդը պիտի անհրաժեշտ կամք և ուժ դրսևորի, իր վախերն ու թուլակամությունը հաղթահարի և արագ ու վճռական դուրս գա այս թուլակամության ու ամեն ինչ զիջելու պատրաստակամության հիպնոզային վիճակից, կարողանա կասեցնել այս անկումային գոհավիժումը: Առանց այդ ճակատագրական հանգրվանը նվաճելու անգամ ամենախելացի որոշումները հնարավոր չի լինի իրագործել: Առանց այդ շրջադարձ-ճակատամարտը շահելու՝ մենք ինքնաբերաբար մեզ դուրս կդնենք ստեղծված աշխարհակարգի քարտեզից: Իսկ այդ վճռական գրոհը բոլորովին նոր ռազմավարություն կպահանջի, նոր ազգային հիմնանպատակ և ամենաոխերիմ թշնամուն անգամ հաղթելու համար՝ անսահման խելք ու քաջություն:

*Сдана / Հանձնվել է՝ 29.10.2023  
Рецензирована / Գրախոսվել է՝ 30.10.2023  
Принята / Ընդունվել է՝ 31.10.2023*